

«Բաց տարածություն» տեխնոլոգիան (OST)

Ռաֆֆի Աֆտանդեյան

Essenceworks consulting group

raffi@bk.ru, raffi_1970@yahoo.com

“Open Space” (OST) անգլերենից թարգմանաբար «Բաց տարածություն» տեխնոլոգիան շատ դյուրին և ազդեցիկ մեթոդ է բարձր արդյունավետություն ապահովող և ոգեշնչող հանդիպումներ, համաժողովներ և այլ տեսակի հանդիպումներ անցկացնելու համար: Սովորաբար նման հանդիպումների մասնակցների թիվը հասնում է 5-ից 2000-ի: «Բաց տարածություն»-ը հատկապես լավ արդյունք է ունենում հետևյալ գործոնների առկայության դեպքում.

- խնդիր, որի համար բոլորը անհանգստանում են,
- խնդրով հետաքրքրված զանազան խմբերի ներկայացուցիչներ,
- խնդիր դժվարություն, կոնֆլիկտ /կամ խնդրի վերաբերյալ կրքերի առկայություն /
- որոշում կայացնելու հրատապություն

Հաճախ մարդիկ գալիս են «Բաց տարածություն» հանդիպմանը, գրավոր հրավերք ստանալուց հետո: Սովորաբար գրավոր հրավերքներ ուղղարկվում է մեծ քանակությամբ մարդկանց: Նման հանդիպումները նախապես մշակված օրակարգ չեն ունենում:

Ի՞նչ է իրենից ներկայացնում «Բաց տարածություն» (OST) հանդիպումը

Բոլոր նրանք, ովքեր հատկապես շատ են հետաքրքրված խնդրով ներկայանում են և շրջան կազմելով նստում: Հանդիպման նախաձեռնողը կարող է ողջույնի խոսք ասել, որից հետո հանդիպման վարողը 15 րոպեի ընթացքում ներկայացնում է հանդիպման բովանդակությունը, օգնում է մասնակիցներին տրամադրվել աշխատելու և բացատրում է, թե ինչպես է խումբը աշխատելու:

Հանդիպման վարողը հայտարարում է, որ բոլոր նրանք, ում հետաքրքրում է այդ ընտրված խնդիրը կարող են քննարկման թեմաներ առաջարկել, որոնք կքննարկվեն հանդիպման սեսիաների ընթացքում: Նա մասնակիցներին առաջարկում է գնալ շրջանի կենտրոնը, թղթի կտորների վրա նշել իրենց առաջարկած թեմաները, ինչպես նաև, նշել իրենց անունները (անունները նշվում են ի նշան այն բանի, որ պարտավորվում են, ավարտին հասցնել քննարկումները, որոնց արդյունքում կմշակվեն և կներկայացվեն համապատասխան հաշվետվություններ): Նման հաշվետվությունները կազմվում են այն նպատակով, որ անմիջապես քննարկումներից հետո տրամադրվեն մասնակիցներին: Քննարկման թեմաները ընտրելուց հետո մասնակիցները այդ թեմաները հայտնում են հավաքված խմբին և դրանք փակցնում են համայնքի տեղեկատվական ցուցատախտակին: Այնուհետև ամբողջ խմբով կազմում են քննարկումների օրակարգը և փակցնում ցուցատախտակին: Ցուցատախտակին են փակցնում նաև յուրաքանչյուր թեմայի

քննարկման ժամը և վայրը: Սովորաբար թեմաների քննարկման ժամը և վայրը նշվում է «post-its»-ների վրա և ամրացվում յուրաքանչյուր թեմային: Այնուհետև մասնակիցները մոտենում են տեղեկատվական ցուցատախտակին և ընտրում են այն թեման, որի քննարկմանը ցանկանում են մասնակցել: Մասնակիցները իրենք էլ կարող են «post-its»-ների վրա նշել ընտրված թեման, ժամը, վայրը և պահել իրենց մոտ: Թեմաների ընտրությունը կատարելուց հետո մասնակիցները սկսում են աշխատել ինքնակառավարվող խմբերում: Այս խմբերում մասնակիցները իրենք են որոշում, թե ինչպես կառավարեն իրենց ժամանակը, տարածքը և էներգիան: Մասնակիցները կարող են որոշել մի խմբից մյուսը «թռչել» մեղվի նման «փոշոտելով» տարբեր խմբերում կայացող քննարկումները: Մասնակիցները նաև կարող են ընտրել «թիթեռի կարգավիճակը» և այդ կերպ նստել կամ կանգնել որևէ սեղանի շուրջ՝ թեյի, սուրճի կամ այլ զովացուցիչ խմիչքների մոտ, որոնք տրամադրվում են «Բաց տարածության» ընթացքում (հաճախ այս հանդիպումները նկարագրվում են որպես անվերջ շարունակվող սուրճի ընդմիջումներ): Քննարկումների ընթացքում կազմվում են հաշվետվություններ և փակցվում են տեղեկատվական ցուցատախտակին «Թեժ նորություններ» խորագրի տակ, որ բոլորը հանարավորություն ունենան ծանոթանալու քննարկումների արդյունքներին: Այս հաշվետվությունները կիրառվում են նաև հանդիպման երկրորդ փուլում, այսպես կոչված «convergence»-ի փուլում, երբ պլանավորվում են ապագա գործողությունները: Հանդիպման վերջում խումբը հավաքվում և շրջան է կազմում, որպեսզի մասնակիցները միմյանց հետ կիսեն իրենց դիտարկումները, ձեռք բերած գիտելիքները և այն ամենը, ինչ նրանց հուզում է:

«Բաց տարածության» մեթոդի մասին խոսելիս հատկապես կարևոր է հիշատակել, որ այն աշխատում է «Երկու ոտքի» կանոնի հիման վրա:

«Երկու ոտքի» կանոնն կայանում է հետևյալում՝ «Եթե մասնակիցը զգում է, որ քննարկման ընթացքում, ոչ բան է սովորում, ոչ էլ աջակցում է քննարկմանը, ապա նա պարտավոր է, օգտագործելով իր երկու ոտքերը, կամ հեռանա կամ տեղափոխվի մի ուրիշ խումբ»:

Կյանքն հենց այսպես էլ աշխատում է, անկախ մենք ցանկանում են եմք դա, թե ոչ: Նույնիս այն ժամանակ, երբ մենք մեզ համար անընդունելի պայմաններում ենք հայտվում ու մտածում ենք, որ չենք կարող հեռանալ, մեր մարմինը միզուցե մնա, բայց մեր միտքը, սիրտը և հոգին ամենայն հավանականությամբ վաղուց արդեն «կարմիր գրավիչ Ֆերրարիով» հեռուն սլացած կլինի:

Այս օրենքը հաճախ այսպես էլ կարելի է ներկայացնել՝ «Պատասխանատվություն վերցրեք ձեր վրա այն բանի համար, ինչ/ ում սիրում եք, որպես պարտավորություն»:

Այս օրենքին հարող չորս սկզբունքներ կան, որոնց երբեմն անվանում են «Կյանքի սկզբունքներ»: Դրանք են.

- Ովքեր էլ, որ գան դրանք ճիշտ մարդիկ են
- Ինչ էլ պատահի, այն այդպես էլ պիտի լիներ

- Երբ էլ սկսվի, այդ ճիշտ ժամանակն էր
- Երբ այն ավարտվի, այն պետք է ավարտվի

Իրականում այս սկզբունքները հանդիսանում են հրավեր և հիշեցում այն բանի համար, որ մասնակիցները դրական գնահատեն և վստահեն քննարկումներին մասնակցող խմբերի պոտենցիալն և կարողանան եղած ժամանակահատվածում, տարածքում և առկա միջոցներով առավելագույնս իրականացնեն աշխատանքը: Հակառակ դեպքում, հաճախ մենք ինքներս ենք փչացնում մեր հանդիպումները, երբ հենվում ենք մեր կանխամտածված ակնկալիքների վրա:

«Բաց տարածության» արդյունքները և առավելությունները

Այսպիսով, որոնք են «Բաց տարածության» մեթոդով իրականացված հանդիպման արդյունքները: Արդյունքները տարբեր կարող են լինել կախված հանդիպման տևողությունից և նպատակից: Սովորաբար 2-ից 2.5 օր տևողությամբ հանդիպումը նման արդյունքներ է ունենում:

- Մասնակիցներին իսկապես հուզող խնդիրները կբացահայտվեն
- Բոլոր բացահայտված խնդիրները կքննարկվեն այնքան շատ կամ այնքան քիչ, որքան որ դրանք հուզում են մասնակիցներին
- Բոլոր քննարկումները կգրանցվեն և կթողարկվեն վերջնական հաշվետվության տեսքով, որոնք անմիջապես կտրամադրվեն բոլոր մասնակիցներին
- Բոլոր խնդիրների առաջնայնությունը կճշտվի, հարակից խնդիրները կմիացվեն
- Ապագա անելիքների համար պատասխանատուներ կնշանակվեն:

Հաճախ կախված հանգամանքներից, հնարավոր է լրացուցիչ հանդիպումներ կայանան պատվիրատուի, հանդիպման վարողի և կազմակերպիչ խմբի հետ, որպեսզի գնահատեն հանդիպման արդյունքները և որոշեն ինչպես աջակցեն հանդիպման արդյունքում առաջացած գաղափարների, ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև առաջացած նոր հարցերի քննարկմանը: Նման հանդիպումները սովորաբար կայանում են ոչ ուշ քան մեկ շաբաթ հետո: Այս հանդիպումից 4-ից 6 շաբաթ հետո ևս մեկ հանդիպուկ կարող է կայանալ գնահատելու համար երկարաժամկետ արդյունքները:

«Բաց տարածության» երկարաժամկետ արդյունքներ կարել է նաև լինել

- Խնդիրների լուծման բարձր արդյունավետությունը
- Արդյունավետ աշխատանքին խանգարող սահմանափակումներից ձեռքազատումը
- Բարդ խնդիրների լուծումը
- Նոր գիտելիքների ձեռքբերումը
- Կազմակերպության ներսում առկա առաջնորդության, կառավարման և համայնքային զարգացման կարողությունների զարգացումը և վերափոխումը

- Մասնակցային տեսլականի ստեղծումը
- Պլանավորված գործողությունների 100 % իրականացումը
- Կազմակերպության ներսում ինչպես նաև համայնքի հետ համագործակցության ավելացումը

«Բաց տարածություն»-ը որպես շարունակական պրակտիկա

«Բաց տարածության» մեթոդը ստեղծվել է 23 տարի առաջ և ստեղծման օրից օգտագործվել է հարյուրավոր երկրներում ամենատարբեր կազմակերպություններին ու համայնքներին անհանգստացնող խնդիրների քննարկման համար: Երբեմն «Բաց տարածության» մեթոդը համեմատում են Յոզաֆի հետ, որը կիրառվում է համայնքների և կազմակերպությունների համար: Ամբողջ աշխարհում այս մեթոդը կիրառվում է ամենատարբեր տեսակի կազմակերպություններում՝ մեծ ու փոքր, կորպորատիվ և հասարակական, կառավարական և համայնքային:

Իրականում «Բաց տարածության» մեթոդը դա մի խումբ արտաքին և ներքին սկզբունքների հավաքածու է, որն կիրառվում է բարձր արդյունավետություն պահանջող, հանդիպումներ, համաժողովներ և այլ միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու համար, որոնց մասնակցում են ամենաբազմազան և մեծ քանակությամբ մասնակիցներ:

Երբեմն ասում են, որ «Բաց տարածություն»-ը դա կազմակերպության հոգուն կազմակերպություն վերադարձնելն է, կամ կազմակերպությանը իր հոգու մոտ ուղարկելը:

«Բաց տարածություն» մեթոդի մասին լրացուցիչ տեղեկություն հայթայթելու համար այցելեք հետևյալ կայքերը.

<http://www.openspaceworld.org/>

<http://www.openspaceworld.com/>

<http://www.amazon.com/Open-Space-Technology-Users-Guide/>

Թարգմանվել է Քիրստինե Մարգսյանի կողմից kristine_sargsyan@yahoo.com